Վերապատրաստող կազմակերպություն ՀՀԿԳՄՄ
<<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց>>
Հերթական ատեստանորման ենթակա
ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Ղազարյան

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս գյուղի միջնակարգ դպրոց

Անցկացման վայրը՝ Վարդենիս

ՎԱՐԴԵՆԻՍ 2022

Բովանդակություն

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ___էջ 3

2.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ , ԽՆԴԻՐՆԵՐԸ , ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ,ՎԱՐԿԱԾԸ _____էջ 7

3.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ ___էջ 8

4. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1_ էջ _16

5.ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2_ էջ _ 17

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ __ էջ_19

7.ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ___էջ_20

8. ԴԱՍԻ ՊԼԱՆ _____էջ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որպեսզի ցեղդ ու հայրենիքդ ապրեն,
նրանց համար մեռնելու կամք ունեցիր:
Իբրև հայ մարդ անպետք է նա, որ չունի այդ կամքը
Գարեգին Նժդեհ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդի գոյապահպանման կարևորագույն գործոններից է պատմական հիշողությունը : Առանց պատմական հիշողության ժողովուրդ չկա: Ազգի խաղաղ ոչնչացումը սկսվում է պատմական հիշողության ոչնչացումից :Այդ պատճառով էլ լեզուն և պատմությունը ժողովրդի գոյապահպանման ու զարգացման ամենակարևոր գործոններն են համարվում ...

Դարերի ընթացքում ժողովրդի գոյապահպանման պայքարի փորձը , ազգի գաղափարը սերնդից սերունդ է փոխանցվել պատմական հիշողության միջոցով :Պատմական հիշողության կորուստը հանգեցնում է ազգի գաղափարի կորստին :

... Լեզվի հետ միասին ազգային ինքնագիտակցության և ազգային նկարագրի ձևավորման գործում ամենակարևոր նշանակությունն ունի պատմությունը: Պատմությունը ազգային ինքնագիտակցության ողնաշարն է : Լեզուն ժողովրդի ոգին է ,պատմությունը ` միսն ու ոսկորը :Առանց ազգային պատմության , ազգային հիշողության ազգերը չեն կարող գոյատևել : Պատմությունը ազգի կենսագրությունն է , հիշողությունը :Առանաց կենսագրության և պատմական հիշողության ոչ մի ազգ չի կարող գոյատևել :Պատմությունը հայրենասիրության քարոզչությունն է : Պատմությունն է հային հայրենասիրություն սովորեցնում , պատմությունն է հային կապում հայրենիքի հետ :

Առանց պատմության , առանց պատմական հիշողության հայրենասիրություն չի կարող լինել : ... Հայը պատմությամբ է հայի նկարագիր ստանում , նրանով է ծանոթանում իր ազգային հերոսներին , իր հայրենիքի անցած պատմական ուղուն ,ազգի թշնամուն և բարեկամին :Անցյալի ,այսինքն `մարդկային հասարակության զարգացման մասին մեզ տեղեկություններ ու փաստեր հաղորդում է պատմությունը :Հետևաբար , պատմությունը մարդկային հասարակության անցյալն ու ուսումնասիրող գիտություն է:Պատմության ուսումնասիրության գործում առաջնահերթ նշանակություն ունեն պատմական գիտելիքներն ամփոփող պատմագրական երկասիրությունները , վարքեր,

տարեգրություններ, հիշատակարաններ ,օրագրություններ ,պատմություններ և այլն ։

Պատմական գիտելիքների զարգացման ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը կոչվում է պատմագրություն ։

Հայաստանում պատմագրության ծաղկումը տեղի է ունեցել Հայոց գրերի գյուտից հետո , որին նպաստեց ՝ Քրիստոնեության ընդունումը , որպես պետական կրոն ,որը ավելի հատկանշական հիմքեր դրեց պատմագրության ասպարեզում և նպաստեց կտրուկ վերելք ապրելուն և սկսեց զարգանալ 5_րդ դարից , իսկ 9_րդ դարում ՝ զարգացած միջնադարում առաջացան հայ պատմագրության նոր ժանրեր ՝ տիեզերական (համաշխարհային) պատմությունը և տարեգրությունը։

Պատմությունը ,որպես ազգի կենսագրություն ՝ հանդիսանում է ազգային արժեքների պահողը ,կերտողը , ձևափոխողը ըստ ժամանակի պահանջների և սերնդե սերունդ փոխանցողը ։ Պատմությունը իր մեջ է ներառում ազգին բնորոշ մոտեցումները , հոգևոր նկարագիրը ,մշակույթը և նրա էթնոպաշտպան դերը ։

Ի՞սկ, ի՞նչ է աշխարհայացքը և ազգային արժեքները ...

Յուրաքանչյուր մարդու մեջ ,ով փորձում է հասկանալ աշխարհը ,անխուսափելիորեն ի հայտ են գալիս բազմաթիվ հարցեր ՝բնության և հասարակության , կյանքի ու մահվան ,Աստծո և հոգու անմահության , բարու և չարի ,գեղեցիկի և տգեղի և այլնի մասին ։

Փորձելով գտնել այս հարցերի պատասխանները , մարդն իր պատկերացումն է ձևավորում աշխարհի և իր մասին ։Այսինքն ՝ մշակում է որոշակի աշխարհայացք և աշխարհաընկալում ,որի միջոցով ընկալում է շրջապատող իրականությունը և իր տեղն այդ իրականության մեջ ,ըստ այդմ էլ ձևավորում ազգային արժեհամակարգը ։

Ի՞սկ ,որոնք են հայ ժողովրդի համար դարեր շարունակ եղել և մնում ՝ազգային հիմնարար արժեքները...

<u>ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ ՝</u>

1. ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ,ԱԶԳ, ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅՐԵՆԻՔ , ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՔ ,ԼԵԶՈՒ։
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ , ՈՐՆ ԸՆԴԳՐԿԵԼ Է ՈՂՋ ԱԶԳԸ ։

3.ՀԱՎԱՏՔ ,ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ ,ՄԻԱՄՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ ։

4.ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ՝ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ,ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ։

Այսամենի հիմքի վրա ձևավորվել են նաև ազգային հոգևոր նկարագիրը , որը ներառում է՝

1.Քրիստոնեական արժեհամակարգը ,որը զուգակցվում և համադրվում է մինչ քրիստոնեական շրջանի հետ ։

2.Գաղափարներ , պատկերացումներ ,խորհրդանիշներ ։

3. Ուսուցում ,դաստիրակություն , սովորույթներ, մշակույթ։

4. Ընտանիք, եկեղեցի ,ուսումնական հաստատություններ ,հասարակական միջավայր և այլն ։

Այս ամենը լրացնում են միմյանց և դառնում արժեհամակարգ ։

Ցանկացած ազգ իր արժեքները և հոգեկերտվածքն ունի ,որը ստեղծում է ձևավորման ողջ ընթացքում ։

Հայ ազգի համար կարևոր արժեքներ են ՝

ՀԱՅՐԵՆԻՔԸ,ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ,ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ , ՍԵՐԸ ,ԸՆՏԱՆԻՔԸ ,ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ և ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆԸ ։

Հայ ազգի կարևոր արժեհամակարգ է ընտանիքը ։

Մուրացանը ,իր Գևորգ Մարզպետունի պատմավեպում ասում է ՝《 Զորավոր է այն ազգը , որը ունի զորավոր ընտանիքներ 》,ընտանիքը զորավոր է ու ամուր կրթությամբ , կրիթ երիտասարդությամբ ։

Գարեգին Նժդեհը ասել է՝ ուզու՞մ ես գուշակել , տեսնել մի ժողովրդի ապագան , նայիր նրա երիտասարդությանը ...

Ուստի առանձնակի տեղ պիտի ունենա հայ երիտասարդների կրթության խնդիրը ,որովհետև Հայ իրականության մեջ կրթությանը միշտ առանձնահատուկ նշանակություն է տրվել: Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը: Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել; Այսօր էլ պետական ու ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի բարելավումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը:

Հայոց պատմություն առարկան միշտ իր կարևոր ներդրումն է ունեցել հայ մանուկների ազգային մտածելակերպի, ազգային արժեքների ձևավորման գործընթացում: Դարեր շարունակ մեր պատմիչների աշխատություններն օգտագործվել են որպես դասագիրք և ազգային, հայրենասիրական ոգով դաստիարակել բազում սերունդներ:

Մեր հարափոփոխ աշխարում ինչքան էլ որ փոխվեն հասարակությունների մտածելակերպը, արժեհամակարգը, վերաբերմունքը ժամանակակից երևույթների ու գործընթացների հանդեպ, միևնույն է մատաղ սերնդին պետք է դաստիարակել ազգային արժեքներով ու հերոսական անցյալի օրինակներով: Բայց հասարակական ընդհանուր Նորմերի վերաձևումների ուվերափոխումների պարագայում կարծես թե երկրորդ պլան է մղվել անհատի հոգևոր աշխարհը, երեխաների դաստիարակությունը ազգային, մշակութայինարժեքներով:Այսօր, երբ նյութականացվել է ամբողջ աշխարհն

Ու մարդկային հարաբերությունները, մարդը հեռացել է արվեստից, մշակույթից, գրականությունից, որի արդյունքում հոգևոր արժեքները աստիճանական անկում են ապրում:

Դպրոցների, ուսուցիչների կարևորագույն նպատակն ու խնդիրն է սովորողների մեջ ձևավորել և զարգացնել ազգային արժեքային համակարգ, ազգային մտածողություն: Իսկ ի՞նչ ասել է «արժեհամակարգ»: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստույգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության, պատմության դերը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Մեր օրերում հրատապ է անհատի հոգևոր զարգացման հիմնահարցը ազգային մշակույթի, արժեքների պահպանման և գալիք սերունդներին փոխանցման համատեքստում:

Հետազոտության նպատակը

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել և հիմնավորել հայ դպրոցականի ազգային արժեհամահարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում պատմության առարկայի դերն ու կարևորությունը նաև պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը: Դասաժամերի ընթացքում բացահայտել սովորողների վերաբերմունքը ազգային հերոսների, պատմական կարևոր իրադարձությունների վերաբերյալ, իրենցունեցած գիտելիքները, վերհանել սխալները, թերությունները:
Կիրառել մեթոդական հնարներ, ուսուցման ժամանակակից մեթոդներ սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար:
Դպրոցական խմբակների շրջանակներում, ինչպես նաև դասաժամերին հաճախ անդրադառնալ հայ ազգային հերոսների կերպարներին, սխրանքներին, որոնք ավելի կոգևորեն սովորողներին ու կդաստիարակեն ռազմահայրենասիրության ոգով:

Հետազոտության խնդիրներն են

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործնընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Հետազոտության մեթոդաբանությունը

Ելնելով հետազոտության մեջ առաջադրված խնդիրներից կարելի է կիրառել հետևյալ մեթոդները. Կերպարային քարտ սա հրաշալի միջոց է պատմական կարևոր իրադարձությունները «ներսից» տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար: Քարտը ներկայացնում է տվյալ իրադարձության կերպարների մտադրությունները,

հուզական վիճակները, տեսանկյունները։Կերպարային քարտը կարող է կիրառվել պատմական ակտիվ մտածողություն խթանող տարատեսակ հարցադրումների քննարկման համար։

Կոնկրետ պատմական կերպարներին անդրադառնալը նպատակ ուն ի վերահիմաստավորելու ազատագրական պայքարի նվիրյալների օրինակելի կենսագործունեության հիմնական դրվագները, հատկանշելու հերոսի բարոյակամային բարձր ոգին, ինչը հնարավորություն կտա ուրվագծելու այն ուսումնական նյութը, որը դրական ազդեցություն կունեն ասովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության համար։

Հետազոտության վարկածը

Սովորողների մոտ ազգային արժեհամակարգի ձևավորումն ավելի արդյունավետ կլինի, եթե.

1. Գրականություն-պատմություն-սովորող փոխազդեցությունը դիտարկվի որպես զարգացման կարևոր և անհրաժեշտ գործընթաց և կրթադաստիրակչական գործընթացի անքակտելի մաս։
2. Մշակվի և հանրակրթության բնագավառումներ դրվի դպրոցականների ազգային արժեհամակարգի ձևավորման և զարգացման մոդելը հաշվի առնելով ազգային և համամարդկային արժեհամակարգերի միաժամանակյա ուսուցման։

Հիմնական մաս

Հայոց պատմություն առարկայի դասավանդման նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է։ Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը։

Դասընթացը նպաստում է իր ինքնությունն ու քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող անհատի ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր

Գործունեությամբ նպաստելու հայ և համաշխարհային հասարակության զարգացմանն

Ու վերափոխմանը այն սկսելով իր անձից, իր սոցիալական ու բնական միջավայրից։

Դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ պատմական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացման, անձիարժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, պատմական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝մարդասիրություն, բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ:

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ

սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ըստ տարիքային առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձիարժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցմանդաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական,

իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող ամենանվիրական ու մեծագույն արժեքը հայրենասիրության դաստիարակումն է սովորողների շրջանում: Հայկական պետականությանը նետված մարտահրավերները հրատապ են դարձնում հայրենիքի ապագա պաշտպանների պատրաստման խնդիրը: Այս գործը մշտական կատարելագործման կարիք ունի: Պատահական չէ, որ պետական մակարդակ ով խրախուսվում է երիտասարդների ռազմահայրենասաիրական դաստիարակությունը: Դրանում մեծ է ազգային հերոսների կերպարների հանրահռչակման և այդ ոգով աշակերտներին կրթելու նշանակությունը: Հայ ժողովուրդն իր պատմության ողջ ընթացքում հերոսների պակաս չի զգացել, որոնց շնորհիվ դիմացել է հազարամյակների դաժան փորձություններին : Այդ հերոսների օրինակով մենք կրթում և դաստիարակում ենք մեր սաներին , որոնք իրենց իդեալն են դարձրել այս կամ այն նվիրյալին:

Հայոց ազատագրական պայքարի դրվագները հայության ինքնահաստատման և դաժան գոյապայքարի վկայություններն են, որոնք ոգևորում են սերունդներին սովորեցնելով քննախույզ մոտեցում դրսևորել անցյալի իրադարձությունների նկատմամբ, կատարել ճշմարիտ եզրահանգումներ և քաղել իրատեսական դասեր:

Խորապես ճշմարիտ է ժամանակն է ծնում հերոսներին: Նույնքան էլ ճշմարիտ է, որ ժողովուրդը, ապավինելով նրանց, դարեր շարունակ սնվում ու հզորանում է իր արժանի զավակների շուրջ հյուսված հերոսապատումներով: Ազգը, որի պատմական հիշողության մեջ, ինչպես օրգանական ամբողջություն, միահյուսված ենք աջ Վարդանի և զորավար Անդրանիկի մեր օրյա հնչեղության լեգենդները, վաղուց գտել է հավերժություն տանող իր ճամփան:

Հայոց պատմության յուրաքանչյուր դասին նախապատրաստվելիս

կարևորվում են բովանդակային մասերը, որոնք նվիրված են հայ ազատամարտի նշանավոր գործիչներին և ոգեշնչում ու հայրենասիրությամբ են վարակում աշակերտներին: Դա առավել նպատակային և դյուրին է դառնում ազգային-ազատագրական պայքարի թեմաներն ուսումնասիրելիս: Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են լսում հատկապես ազատագրական պայքարի նվիրյալների կյանքի ու գործունեության մասին

պատմող դրվագները:

Պատմության դասաժամերին է, որոշ ակերտները, ուսուցչի օգնությամբ և ուղղորդմամբ, բացահայտում են, թե ովքեր են իրենք, ովքեր են իրենց նախնիները, որտեղ են ապրել, ինչ պատմություն ունեն, ինչ ներդրում ունեն համամարդկային մշակույթի ասպարեզում: Երբ որ աշակերտը ուսումնասիրում է հայոց պատմության հերոսական էջերը, ազատագրական պայքարի դրվագները, հերոսների անձնվիրումն ու հայրենասիրության բազում օրինակներ, ինքն էլ կարծես «վարակվում է» և անպայման ձգտում հասնել այդ կերպարներին: Դրա վառ օրինակը հենց Ղարաբաղյան 3-րդ պատերազմի մասնակից մեր հերոս հայորդիներն են, որոնք իրենց հայրերի ու պապերի օրինակ ով նետվեցին մարտի՝ մոռանալով սեփական կյանքի մասին:

Դասընթացի ծրագիրը պետք է կազմված լինի գիտամանկավարժական հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան. Այն է՝ նյութի մատչելիություն, տարիքային համապատասխանություն, գիտամեթոդական բազմազանություն:

Չափազանց կարևոր է միջառարկայական կապերի միջոցով գրականության դասաժամերին դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ պատմավեպերի հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամումոտ:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձրարժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ մի այն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասիդաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:
Հայոց պետականության ամրապնդման նպատակով անհրաժեշտ է դպրոցի կրթության և դաստիարակության բովանդակությունը հագեցնել ազգային մշակույթի արժեքներով՝ միաժամանակ ընդգծելով համամարդկայինը:

Սովորողների դաստիարակության համար կարևոր է ազգային մշակութային արժեքները ճանաչելու, վերաիմաստավորելու, երեխաներին ազգային ոգով դաստիարակելու անհրաժեշտությունը: Այսօր շատ կարևոր է ապահովել նոր սերնդի դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումներով, առանձնահատկություններով: Ազգային արվեստի, կենցաղի, խորհրդանիշների, հայրենի բնաշխարհի յուրահատկությունների, ժողովրդական բանահյուսության հետ ծանոթությունը, հաղորդակցումը,դա նպաստում է սովորողների ազգային բարոյական հիմքերի ձևավորմանը, որը միշտ էլ եղել է մանկավարժական գիտության հիմնական հիմնահարցերից մեկը:

Ազգային և համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում ոչ միայն հատուկ այդ նպատակին ծառայող քարոզչության ու տարաբնույթ գործունեության ընթացքում: Մարդն ընդօրինակում է ազգային ապրելակերպը, յուրացնում լեզուն, մշակույթը, հոգեբանությունը և բազմաթիվ այլ որակներ՝ աստիճանաբար ձևավորվելով որպես տվյալ ազգի լիարժեք անդամ: Ազգային դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներն իր մեջ չամփոփած հայը չի կարող լինել իր

ազգի լիարժեք անդամ: Հայ դպրոցի, առհասարակ հայերի դաստիարակության կարևորագույն խնդիրն է՝ ապահովել ազգայինի և համամարդկայինի մեկտեղումը: Ուրեմն ազգային դաստիարակությունն իր մեջ պետք է ներառի նաև համամարդկային արժեքներ:

21-րդ դարում մեծ տարածում գտած գլոբալացնամ ճանապարհին կորսվում են ազգային արժեքներն ու դիմագիծը, և ամեն ինչ տանում է համաշխարհայնացման /գլոբալիզացիայի/, այդ պատճառով հիմա առավել քան երբևէ պետք է անընդհատ աշակերտների հետ զրուցել ազգային արժեքների դերի և կարևորության մասին, անընդհատ հիշեցնել, թե ովքեր են իրենց նախնիները, ինչ փառավոր անցյալ են ունեցել և որ մենք պարզապես իրավունք չունեն քկորցնելու այն, ինչ մեր պապերն իրենց արյան գնով պահելու փոխանցել են մեզ:
Առաջնահերթություն է, որ աշակերտները բացահայտեն, հետազոտեն հայոց պատմության վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը և վերհանեն հույժ կարևոր փաստերիցը մեկը, այն է որ հայ ժողովուրդը եկվոր չէ, այլ ձևավորվելու պատմական հազարամյա ուղին անցել էիր բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում: Հայ ժողովուրդը, շփվելով և փոխազդեցությունների մեջ լինելով տարբեր քաղաքակրթությունների հետ, պահպանելու զարգացրել էիր ինքնատիպ մշակույթը, ազգային նկարագիրն ու գոյապատկերը: Դրաշնորհիվ հայությունը հազարամյակների միջով հասել է մարդկության պատմության արդի փուլին: Ահա թե ինչու հայկական մշակութային հարուստ ժառանգության համակողմանի ուսումնասիրումը կազմել է դասագրքերի կարևոր բովանդակային ուղղություններից մեկը: Հայոց պատմության բովանդակային առանցքը կազմել է նաև հայկական պետականության պատմությունը,
Որը սերտորեն կապվում է նույն քաղաքակրթական խնդիրների հետ:
Հայ ժողովուրդը մշտապես ապրելու արարել է մի տարածաշրջանում, որտեղ միշտ հատվել ու բախվել են տարբեր ազգերի ու քաղաքակրթությունների շահերն ու հակասությունները: Այս հանգամանքն ավելի կարևոր է դարձրել այս «քաղաքակրթական խաչմերուկներում» ազգային նկարագիրն ու դիմագիծը անաղարտ պահելու հանգամանքը: Մարդկության պատմության արդի փուլում հայ ժողովուրդը դարձյալ բախվում է այս խնդրին, քանի որ մեր տարածաշրջանում դարձյալ բախվում են աշխարհի մեծ պետությունների շահերը և յուրաքանչյուր երկիր փորձում էիր կոմղը գրավել հայ ժողովրդին: Այս պայմաններում դարձյալ չափազանց
կարևոր է առաջ գնալ ազգային ու պետական շահերը առաջնահերթություն ունենալու ճանապարհով և պատմական փորձը ցույց է տալիս, որ ինչպիսի ժամանակաշրջանի ծնունդ

էլ լինեն պատմության ընթացքն ու ղղորդող անհատները, նրանք միջազգային հարաբերություններում պետք է լինեն զգոն և հավասարակշռված: Հատկապես փոքրազգերի ներկայացուցիչները, գտնվելով մեծ տերությունների հետ շախմատային նույն հարթակի վրա, պետք է մտած են ոչ թե հակամարտելու, այլ առավել շահելու մասին: «Մեծերը» չեններում «փոքրերի» ինքնուրույն քայլերը : Այդպես եղել է անցյալում, այդպես է հիմա:

Դպրոցականների ազգային մտածողությունը խթանելու նպատակով պետք է սովորողներին հանձնարարել լրացուցիչ նյութեր հավաքել օրինակ, հայդուկների, ազատամարտիկների կյանքի, գործունեության վերաբերյալ: Այս ընթացքում սովորողները կհարստացնեն իրենց գիտելիքները տվյալ նյութի շուրջ, նաև կսովորեցն ինքնուրույն օգտվել այլ աղբյուրներից, զատել տեղեկույթի կարևորն ու երկրորդականը, հանգել ինքնուրույն եզրհանգումների, ձևավորել սեփական դիրքորոշումը:

Դպրոցականների շրջանում ազգային մտածողության ձևավորման և խթանման համար կարևոր է անդրադառնալ ինքնաճանաչողության հարցերին:

Ինքնությունը բազմաթիվ անհայտներով մի կառույց է՝ պարուրված խորհրդանշաններով, տարատեսակ իրապատումներով, տեսլականներով ու առասպելներով, որոնք ժամանակի ընթացքում ստանում են տարբեր բացատրություններ:Այս առումով միշտ էլ առաջանում էին քնության (ինքնաճանաչողության) պատմական ձևերի իմաստավորման, ավանդվածի մեկնաբանության և ազգային ինքնության տարրերի արդիականացման անհրաժեշտություն:

Ինքնաճանաչողությունը պարտադիր ենթադրում է երկխոսություն անցյալի հետ, որի ժամանակ անցյալը պետք է դառնա ներկայի մաս, ներկայի անցյալ, որովհետև ինքնության ցանկացած հարացույցան պատկերացնելի է առանց պատմական շերտի:

Սակայն մեզանում կարծես թե բացակայում է անցյալի հետ բովանդակային խոսույթը (դիսկուրսը). Մեր անցյալի պատմամշակութային ժառանգությունը գերազանցապես պահվում է ազգային գրադարաններում ու մատենադարաններում, հիմնականում՝ այլոց ցուցադրելու համար: Անցյալը բացակայում է ներկայի մեջ:Մեզանում գերիշխում է ազգային արժեքների նկատմամբ զգացմունքային ու ձևական մոտեցումը: Իսկ արժեքները եթե միայն պահպանվում են մատենադարաններում ու թանգարաններում, ապա ոչ միայն կորցնում են իրենց գործառութային նշանակությունը, այլև դրանց բացակայության հետևանքով մարդկանց հոգեկանում ստեղծվում են դատարկ տարածություններ, որոնք լցվում են

օտարածին ցածրաճաշակ թափոններով: Եթե բավարարվում ենք միայն այդ արժեքների ֆիզիկական գոյությունը փաստելով, ապա դրանք դադարում են արժեքներ լինելուց: Այլ խոսքով՝ արժեքներն ոչ միայն պետք է պահպանել, այլև դրանք յուրացնելով-ներքնայնացնելով՝անընդհատ հարստացնելու արդիականացնել:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1

Դասի թեման է՝ պատմագրությունը (9_14 րդ) դարում ։

Դասը սկսվեց տնային աշխատանքների ստուգումով , բոլորը ներկայացրեցին տնային աշխատանքները՝ փորձեցինք քննարկման միջոցով վեր հանել թույլ տրված սխալները ։ Հարցադրումներով սկսվեց դասը ։Ամփոփեցինք <<Մշակույթի վերելքը ։Կրթական համակարգը >>10_14րդ դարերում թեման , որպեսզի ստուգվեին աշակերտների ձեռք բերած գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ ։ Առաջադրված հետադարձ հարցերի օգնությամբ աշակերտների պատասխաններից ելնելով ճշտել նյութի ընկալումը և վերհիշել պատմագրության ձևավորումը 5_րդ դարից սկսած ։Դասը քննարկելուց և ամփոփելուց հետո , հակիրճ դասախոսությամբ հաղորդեցի նոր դասը , այնուհետև փորձեցի հարցադրումների միջոցով ստուգել նրանց գիտելիքները նոր դասից ։ Քանի որ հետազոտվող աշակերտները հիմնականում միջին կարողությունների տեր են ,իմ հարցերին պատասխանում էին ոչ լիարժեք , բացառությամբ 2_ աշակերտի ։

Այսօրվա դասից գնահատվեցին 3_ աշակերտ ։ Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով ։Որպես տնային աշխատանք հանձնարարեցի << Պատմագրությունը >> _ էջ ։Հայոց պատմության աշխատանքային տետրում դասից դուրս գրել , նոր հասկացությունները և նոր անունները ։

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Դասաժամի սկզբնական փուլը նվիրվեց պատմության (պատմական գիտության) դերի ու նշանակության վերաբերյալ սովորողների պատկերացումների ընդհանրացմանը ։
Օգտագործեցի տարբեր մեթոդներ ու վարժություններ , անհատական աշխատանք , խմբային (2_ աշակերտ և 3_ աշակերտ համապատասխան ընդունակություններով) , մտագրոհ , բանավեճ ։
Տեսական որոշ եզրակացություններ անելուց հետո `ընթերցեցի լրացուցիչ նյութերից և գրականությունից ընտրված հատվածները , ապա հանձնարարեցի խմբային աշխատանք `կատարել հետևյալ հարցերի շուրջ (յուրաքանչյուր խմբին 2_հարց)։
Պատմությունը ` որպես ազգային ինքնագիտակցության ու նկարագրի ձևավորման և պահպանման միջոց ։
2.Պատմական հիշողությունը և հայերի էթնիկական ինքնապաշտպանությունը։
3.Պատմահայր Մովսես Խորենացու աշխատության նշանակությունը , հայոց քրիստոնեական ազգային արժեհամակարգի ձևավորման գործում ։
4.Հայրենիքի և հայրենասիրության գաղափարները հայ պատմագրության մեջ ։
Աշակերտներին տրամադրեցի նախօրոք պատրաստված տեքստեր (լրացուցիչ նյութերից և այլ աղբյուրներից) ։Սովորողներին կողմնորոշելու համար մեկ անգամ ևս նշեցի ,որ պատմական հիշողությունը դա ժողովրդի կենսագրությունն է , հավաքական հիշողությունն իր անցյալի մասին , որ այդ հիշողությունը պահպանվում ու փոխանցվում է սերունդներին գրավոր ու բանավոր խոսքի , պատմական հուշարձանների միջոցով ։
Իսկ պատմագրությունն այդ հիշողությունը , պատմական փորձը գիտականորեն մշակում է արժեվորում , վերլուծում և ընդհանրացնում , պատմական զարգացման օրինաչափությունները ,հնարավորություն է տալիս բացատրել ներկան և կանխատեսել ապագան ։
Վերը նշված հարցերի մեկնաբանման համար , որպես ավելի կարևոր մտքեր նշեցի `
Առանց պատմական հիշողության ազգը չի կարող գոյատևել։

Պատմությունը ազգային ինքնագիտակցության ողնաշարն է։

Ազգի պատմական փորձը , ազգային հիմնարար արժեքների փոխանցումը սերնդից սերունդ , իրականացվում է պատմական հիշողության միջոցով ։

Հայն իր պատմությամբ է հայի նկարագիր ստանում , ծանոթանում իր ազգային արժեքներին, հերոսներին ,հայրենիքի անցած պատմական ուղուն ։ Քանի որ սովորողները <<Հայոց պատմություն >> առարկայից բավականաչափ գիտելիքներ ունեն հայ պատմագրության վերաբերյալ , ապա նրանց նախօրոք (բաժանելով խմբերի) հանձնարարեցի տեղեկատվություն հավաքել պատմագրության կոնկրետ շրջանների վերաբերյալ , պատրաստել զեկուցումներ և դասաժամին ներկայացնել մյուս խմբին ։Այնուհետև անդրադարձ կատարելու համար -կիրառեցի M_ ձև աղյուսակը `

Ժամանակաշրջան	Պատմիչներ	Աշխատանքի անվանում

Աղյուսակը լրացնելու համար գրատախտակին մոտեցան 3_ աշակերտ ։Աշակերտներից մեկը կարողացավ լրացնել անթերի , մյուս երկուսը լրացրեցին բացթողումներով և վրիպումներով `աշխատանքը , գործիչ կամ ժամանակաշրջան ։Նրանց սխալները թույլ տվեցի ուղել մյուս աշակերտներին և փորձեցին լրացնել բանավոր կերպով հետևյալ հարցադրումներին՝ ի՞նչ ժանրի է աշխատությունը ,որն է աշխատանքի գլխավոր գաղափարը (միտքը , նշանակությունը) ։

Աղյուսակը լրացնելուց հետո , հակիրճ դասախոսությամբ ներկայացրեցի նոր ուսուցանվող դասը ։Աշակերտների գիտելիքները նոր յուրացվող դասից փորձեցի ստուգել հստակ ու բաց հարցերի միջոցով ։Գնահատեցի բոլոր աշակերտներին ,ըստ իրենց գիտելիքների ։

Տնային աշխատանքի հանձնարարումով ավարտեցի դասը ։

ԱՆՐԱԴԱՐՁ _ Պատմագրությանը վերաբերող դասանյութը կարելի է ամփոփել հարցերի միջոցով , ինչպես նաև կազմակերպել քննարկում ` <<Պատմությունը և մենք >> վերնագրով ։

Տնային աշխատանքները պետք է նպատակ ունենան զարգացնել սովորողների ինքնուրույն ,որոնողական , հետազոտական աշխատանքի կարողություններ։

Եզրակացություն

Որպես ամփոփում կարելի է փաստել, որ ազգային արժեհամակարգի ձևավորմանը դպրոցում տարբեր դասաժամերին անհրաժեշտ է կարևոր տեղ հատկացնել, իսկ պատության, հատկապես հայոց պատմության դասաժամերին՝ առավել ևս:

Հիմա հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետությունն ապրում են դժվարագույն ժամանակներ, երբ վտանգված է հայ ժողովրդի և հայոց պետականության գոյությունը: Հիմա նոր Ավարայրի ու նոր Սարդարապատի կարիքը կա, հիմա առավել քան երբևե պետք է համախմբվել մեկ միասնական բռունցք դառնալ, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել մեր պետության գլխին կախված հերթական վտանգը:

Ժամանակի հրամայականն է կրթել

Ուղաստիարակել ազգային մտածողությամբ ու արժեքներով տոգորված սերունդ, նրանց մեջ ներարկել հայրենասիրություն, համախմբածություն և սառը դատողություն: Բանավեճերի միջոցով նրանց ցույց տալ, թե ինչերի է ընդունակ իր հողն ու ջուրը ամեն գնով պաշտպանելու պատրաստ զինվորը, հայ գյուղացին ու սովորական հայ քաղաքացին:

Սովորողներին պետք է ոգևորել անցյալի պատմական հերոսական դրվագներով, թե ինչպես են փոքրաթիվ հայկական ուժերը հաղթել թշնամու բազմաքանակ ու լավ սպառազինված ուժերին՝ փորձելով հիմնավորել, որ հաջողության հասնելու գրավականն ամենևին էլ թվական գերակշռությունը չէ, այլ նպատակը՝ հանուն որի ելնում են պայքարի:

Հայ ժողովրդին բաժին է հասել դժվար ու պայքարով լի ճակատագիր, բայց նա միշտ պայքարել է ու իր զավակների արյան գնով ամրագրել իր գոյության իրավունքը: Սա էլ կանցնի, առավել քան համոզված եմ, որ հաղթանակը մերն է լինելու, քանզի մեր գործն արդար է, մենք պայքարում ենք մեր հայրենիքի յուրաքանչյուր բուռ հողի համար, այլ ոչ թե զավթում օտարինը, ուստի պետք է համախմբվել, մի կողմ թողնել բոլոր տեսակի տարաձայնությունները և ձեռնամուխ լինել ազգանվեր գործին՝ հայրենիքի փրկությանը:

Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ փայլուն սերունդ է մեծանում՝ համարձակ, պահանջատեր ու նախանձախնդիր, մեր խնդիրն է նպաստել, ուղղորդել,որ նրանք հայրենասեր ու հայրենաճանաչ լինեն, իրենք են մեր ապագան ու մեր երկիրը շենացնողները:

Դպրոցական դասագրքերում, հանրակրթական և առարկայական չափորոշիչներում պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել ազգային արժեհամակագի ձևավորման հարցերին, ավելացնել հայագիտական առարկաներին հատկացվող ժամաքանակները,

հնարավորություններ ստեղծվեն հատկապես ավագ դպրոցի աշակերտների հետ հաճախակի կազմակրեպել արշավներ դեպի պատմամշակութային հնավայրեր, որպեսզի նրանք մոտիկից տեսնեն ու ճանաչեն հայրենիքի ամեն անկյունը, նախագծային աշխատանք հանձնարարել, որի ընթացքում սովորողները ինքնուրույն կհետազոտեն ու կբացահայտեն իրենց ծննդվայրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հայոց ինքնության հիմնահարցեր Սեյրան Զաքարյան Երևան 2020թ

2. Հանրակրթության պետական կրթակարգ Չափորոշիչներ ծրագրեր մեթոդներ Երևան 2007թ

3.«Գիրք պատմության ուսուցման Ինչու՞, ինչպե՞ս» ,Պարադիգմա կրթական հիմնադրամ, Երևան 2020 թ

4. «Հայագիտությունը դպրոցում» գիտամեթոդական վերլուծական հանդես, Երևան 2017 թ.,

5.<<Լ. Խուրշուդյան ,Հայոցազգայինզաղափարախոսություն ,Երևան , 1999 թ>>

6. Համացանց

7. ,Հավատամք» Գ. Նժդեհ, Երևան 2011 թ.

8.Եվ սեփական մոտեցումները ըստ 11_րդ դասարանի << Հայոց եկեղեցու պատմություն >> դասագրքի

ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

ՈՒՍՈՒՑԻՉ ` Ա. Ղազարյան ։

Առարկա `Հայոց պատմություն ,

Դասարան 7_րդ , աշակերտ թիվ ` 2_աղջիկ և 3 _տղա։

Դասի թեման `Պատմագրություն։

Թեմային հատկացված է 2_ դասաժամ։ 2_ րդ կիսամյակ ։

ՄԵԹՈԴՆԵՐ ` Զրույց ,դասախոսություն, բանավեճ և քարտային՝ կապված սովորողների կարողունակությունից ։

Օգտագործվող նյութեր ` դասագիրք, լրացուցիչ նյութեր ,գրականությունից , մշակույթից ,ընտրված հատվածներ ,աշխատանքային տետր ,կավիճ։

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ `

ա) Գիտենա հայ պատմագրության դերը հայ արժեհամակարգի ձևավորման գործում ,հատկապես հայոց այբուբենի ստեղծումից հետո ։

Բ) Կարողանա վերլուծել ` պատմագրության բնագավառում եղած ձեռքբերումները 5_րդ դարում և դրանց զարգացման նախադրյալները 9_14 րդ դարերում ։

Գ)Գ նահատել Մովսես Խորենացու << Հայոց պատմությունը >> , որպես դասական պատմագրության հիմնասյուն ։

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ` Ուսուցման արդյունքներ ,որոնք կփաստեն ,որ ուսոցումը տեղի ունեցավ

Ա) Բնութագրել ` թե ի՞նչ է պատմությունը և պատմագրությունը ։

Բ) Կարողանան արժևորել `ազգային այն արժեքները , որոնք իր մեջ է ներառում պատմությունը և պատմագրության միջոցով փոխանցվում է սերունդներին ։

Գ) Թվեն ` նշանավոր պատմագիրներին և նրանց աշխատությունները։

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ 5_7 ՐՈՊԵ ։

1.Կատարել հաշվառում , դասի նախապատրաստում ։

2.Տնային աշխատանքների ստուգում և ի՞նչ անհասկանալի հարցեր ունեն անցած դասից ։

ԽԹԱՆՈՒՄ 5_10 ՐՈՊԵ

Խթանման փուլը՝ լսում են ուսուցչին, պատասխանում են հարցերին և հնչեցնում սեփական հարցերը ։Իրականացնել մտագրոհ և բանավեճ ։Սովորողների հետ քննարկել 5_րդ դարի ձեռքբերումները , պատմագրության բնագավառում և 9_ րդ դարում և հատկապես վերջերից սկսած վերելքի նախադրյալները , զարգացման ընթացքը և նպաստող գործոնները ։

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ՝ 10_15 ՐՈՊԵ ։

Իրականացնել դասախոսության միջոցով նոր ուսուցանվող դասը , բացատրել պատմագրության գործոնները, պատմագրական ժանրերը , հեղինակներին և նրանց աշխատությունները՝ ըստ ժանրերի ։Այնուհետև հարցերի միջոցով ստուգել աշակերտների գիտելիքները նոր դասանյութի վերաբերյալ ։

1,Ի՞նչով էր պայմանաորված 5_րդ դարից սկսած հայ պատմագրության մտքի բացառիկ դերն ու նշանակությունը ։

2, Ներկայացնեն 7_10 դարերի հայտնի պատմագիրներին ։

3, Ի՞նչու պատմագրական երկերին 12_ րդ դարում փոխարինեցին ժամանակագրություններն ու տարեգրությունները ։ Ի՞նչով են դրանք տարբերվում միմյանցից ։

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ 10_ ՐՈՊԵ ։ Աշակերտները լիարժեք ընկալում են ,դասի բոլոր հարցադրումները և հիմնական գաղափարները և ամբողջացնում է դրանք։

ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ՝ 5_ՐՈՊԵ

Դասից դուրս բերել՝ նոր հասկացությունները , անունները և արտահայտությունները ։